ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան 0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"12" հուլիսի 2024 թ. N 1596-Ա

ՀՐԱՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 11-ի թիվ 15 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված «Գ-Արքունիք-1» ՍՊԸ-ին տրամադրել Գեղարքունիքի

մարզի Սևան, Գավառ և Ճամբարակ տարածաշրջանների միասնական երթուղիների սպասարկման իրավունք տասը տարի ժամկետով:

3. «Գ-Արքունիք-1» ՍՊԸ-ի հետ կնքել ժամանակացույց հայտ-պարտավորությամբ ներկայացված քանակով ավտոբուսները ձեռք բերելու վերաբերյալ:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանին:

7/12/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի

<< >> _____ 2024թ.

N _____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

11.07.2024թ. ք. Երևան

2024թ. հուլիսի 11-ին ժամը 14:30-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյանը

քարտուղար՝ Խ. Սողոմոնյանը

անդամներ՝ Ա. Խաչատրյանը

Տ. Գասպարյանը

Դ. Մելքոնյանը

<u>Օրակարգում՝</u>

Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ

իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024 թվականի հուլիսի 8-ի կրկնակի մրցույթի ամփոփում:

Արձանագրվեց՝

Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024 թվականի հուլիսի 8-ի կրկնակի մրցույթի արդյունքում «Գ-Արքունիք-1» ՍՊ ընկերությունը հավաքել է 53 միավոր՝ համաձայն մրցութային ամփոփ թերթիկի:

Քննարկվեց՝

Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024 թվականի հուլիսի 8-ի կրկնակի մրցույթի միակ մասնակից «Գ-Արքունիք-1» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու հարցը:

Որոշվեց՝

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 49-րդ և 64-րդ կետերի պահանջներով՝

1. Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2024 հուլիսի 8-ի կրկնակի մրցույթում հաղթող ճանաչել «Գ-Արքունիք-1» ՍՊ ընկերությանը 10 (տասը) տարի ժամկետով հետևյալ տրանսպորտային միջոցներով՝

39 (երեսունինը) 2024թ. արտադրության ԳԱԶ (ГАЗель NEXT) A65R33 մակնիշի, 7 (յոթ) 2024թ. արտադրության ԳԱԶ (ГАЗель NEXT) A65R33 մակնիշի հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված և 23 (քսաներեք) 2024թ. ԳԱԶ (ГАЗель NEXT) A64R45,

և ըստ երթուղների՝ մեկ ուղևորի համար առաջարկված հետևյալ փոխադրավարձերով՝

Հ/Հ	Երթուղու անվանումը և համարը	Փոխադրավարձը, դրամ	Սպասարկման համար պահանջվող ավտոբուսների քանակը
1.	**ՍԵՎԱՆ-ԳԱԳԱՐԻՆ ԹԻՎ 1**	**200**	2
	միջանկյալ կանգառներ		
	գ. Վարսեր	150	
	գ. Գեղամավան	200	
2.	**ՍԵՎԱՆ-ՍԵՄՅՈՆՈՎԿԱ ԹԻՎ 2**	**300**	2
	գ. Ծովագյուղ	200	
3.	**ՍԵՎԱՆ-ՑԱՄԱՔԱԲԵՐԴ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ ԹԻՎ 3**	**200**	1
	միջանկյալ կանգառներ		
	գ. Ցամաքաբերդ	150	
4.	**ՆՈՐԱՇԵՆ-ՍԵՎԱՆ ԹԻՎ 4**	**200**	1
	միջանկյալ կանգառներ		
	գ. Չկալովկա	150	
5.	**ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆ-ՎԱՐՍԵՐ ԹԻՎ 5**	**300**	2
	միջանկյալ կանգառներ		
	Սևան	150	
6.	**ԳԱՎԱՌ-ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԹԻՎ 1**	**250**	8
	միջանկյալ կանգառներ		
	գ. Լանջաղբյուր	250	
	գ. Սարուխան	250	
	գ. Գանձակ	200	
7.	**ԳԱՎԱՌ-ԾԱՂԿԱՇԵՆ ԹԻՎ 2**	**300**	2
	միջանկյալ կանգառներ		
	գ. Հացառատ	200	
8.	**ԳԱՎԱՌ-ՍԱՐՈՒԽԱՆ ԹԻՎ 3**	**250**	1
	միջանկյալ կանգառներ		
	գ. Կարմիրգյուղ	200	
9.	**ՆՈՐԱՏՈՒՍ-ԳԱՎԱՌ ԹԻՎ 4**	**300**	3
	միջանկյալ կանգառներ		
	գ. Արծվաքար	200	
10.	**ԾՈՎԱԶԱՐԴ-ԳԱՎԱՌ ԹԻՎ 5**	**400**	2
	միջանկյալ կանգառներ		
	գ. Լճափ	300	

	գ. Բերդկունք	300	
	գ. Հայրավանք	300	
11.	**ԴՐԱԽՏԻԿ-ՃԱՄԲԱՐԱԿ ԹԻՎ 1**	**300**	1
	միջանկյալ կանգառներ		
	գ. Աղբերք	200	
12.	**ԾԱՓԱԹԱՂ-ՃԱՄԲԱՐԱԿ ԹԻՎ 2**	**700**	2
	միջանկյալ կանգառներ		
	գ. Ջիլ	600	
	գ. Արտանիշ	400	
	գ. Շողակաթ	300	
13.	**ԱՆՏԱՌԱՄԵՋ-ՃԱՄԲԱՐԱԿ ԹԻՎ 3**	**500**	1
	միջանկյալ կանգառներ		
	գ. Ձորավանք	500	
	գ. Դպրաբակ	400	
	գ. Այգուտ	300	
	գ. Մարտունի	300	
	գ. Գետիկ	300	
	գ. Թթուջուր	200	
14.	**ԿԱԼԱՎԱՆ-ՃԱՄԲԱՐԱԿ ԹԻՎ 4**	**500**	1
	միջանկյալ կանգառներ		
	գ. Բարեպատ	500	
	գ. Դպրաբակ	400	
	գ. Այգուտ	300	
	գ. Մարտունի	300	
	գ. Գետիկ	300	
	գ. Թթուջուր	200	
15.	**ՎԱՀԱՆ-ՃԱՄԲԱՐԱԿ ԹԻՎ 5**	**200**	1
16.	**ՃԱՄԲԱՐԱԿ-ԵՐԵՎԱՆ ԹԻՎ 301**	**1400**	3
17.	**ԳԱՎԱՌ-ԵՐԵՎԱՆ ԹԻՎ 303**	**1300**	12
18.	**ՍԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ ԹԻՎ 304**	**1000**	12
19.	**ՍԵՎԱՆ-ՀՐԱԶԴԱՆ ԹԻՎ 307**	**400**	2
	միջանկյալ կանգառներ		
	գ. Ծաղկունք	150	1
	գ. Դդմաշեն	250	
	գ. Զովաբեր	300	
20.	**ՍԵՎԱՆ-ԳԱՎԱՌ ԹԻՎ 308**	**700**	
			Ընդհանուր՝ 60 հիմնական և 9 պահուստային միկրոավտոբուս

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Խ. Սողոմոնյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան

Դ. Մելքոնյան